

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/2

14 մայիսի 2013թ.

Քննարկվեց <Ղազար Ավետիսյան> ՍՊԸ դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 02.05.2013թ-ի թիվ 2120326 ստուգման ակտի դեմ:

<Ղազար Ավետիսյան> ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) տնօրենի բողոքում մասնավորապես նշված է.

Ս.թ. ապրիլի 19-ին ինձ պատկանող խանութ եկավ մի անձնավորություն, որը ներկայացավ որպես հարկայինի աշխատակից և ստուգեց հսկիչ-դրամարկղային մեքենան: Ես բնականաբար խնդրեցի նրան, որ ներակայացնի հանձնարարագիրը, ինչին նա պատասխանեց, որ հանձնարարագիրը հետո կներկայացնի: Այնուհետև նա ստուգեց հսկիչ-դրամարկղային մեքենան, որից հետո անջատեց այն, կրկին միացրեց և կատարեց 950 դրամի մուտք: Իմ կողմից տեսուչին ուղղված հարցին, թե ինչու նա կատարեց 950 դրամի մուտք, նա պատասխանեց, թե խախտում եմ կատարել՝ կատարված գնման դիմաց դրամարկղային կտրոն չես տրամադրել: Ես ասեցի, որ նա իրավացի չէ, որ ես իրականացրել եմ հասույթի լիարժեք հաշվառում:

Այնուհետև, ս.թ. ապրիլի 22-ին, ես ստացել եմ թիվ 2120326 համարի հանձնարարագիրը և նույն համարի ակտը, որով տուգանվել եմ 150.000 դրամով:

Վերը նշված ակտի վերջին էջում նշվել է, որ ես հրաժարվել եմ ակտը ստորագրելուց, սակայն նշեմ, որ ինձ որևէ փաստաթուղթ ստորագրման չեն ներկայացրել:

Տեղեկացնեմ նաև, որ իմ կողմից որևէ խախտում չի կատարվել: Բացի այդ, հանձնարարագրի ժամկետը լրացել է և այն ժամանակաշրջանում, երբ տեսուչն այցելել է խանութ, նա ընկերությունում իրավունք չուներ անցկացնել ստուգում:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է ստուգման ակտը համարել չեղյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 15.04.2013թ-ի թիվ 2120326 հանձնարարագրի <Ղազար Ավետիսյան> ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 02.05.2013թ-ի թիվ 2120326 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Հարկային տեսուչ Արսեն Պողոսյանի կողմից 19.04.2013թ-ին ժամը 21:05-ին ք.Երևան, Կողբացի 3/3 հասցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 900 դրամի չափով՝ 1 հատ <Չիպս> 900 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, որին ընկերության տնօրենը չծանոթացավ: Այնուհետ ժամը 21:07-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 900 դրամը, ժամը 21:07-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 21:08-ին նորից դուրս բերվեց <Z>

հաշվետվությունը՝ 900 դրամ ընդհանուր գումարով: <Z> հաշվետվությունը չի կցվում ակտի նախագծին և <Z> հաշվետվությունում ներառված թիվը բացակայում է, քանի որ տնօրենը խոչընդոտել է ստուգմանը՝ վերցնելով <Z> հաշվետվությունը:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.04թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում կիրառվել է ՀՀ սկիզբ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի առաջին պարբերությամբ սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրված խախտման վերաբերյալ հարկ է նշել հետևյալը:

ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի համաձայն. «Հսկիչ գնման (գնումների) արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 6.2-րդ կետում նշված ժամկետները, տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները»:

Իր հերթին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունների և ստուգման արդյունքում կազմվող ակտում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) վերաբերյալ: Շրջաբերական նամակի «ՀԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև»-ը բաժնում մասնավորապես նշված է. «Գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեցին տնտեսվարողին (արձանագրությունը կցվում է), և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը, որից հետո տպվեց վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով»:

Քննարկվող դեպքում, ստուգման ընթացքում ձեռք բերված ապրանքը սահմանված կարգով ետ չի վերադարձվել տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին: Այսինքն, խախտվել են ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև շրջաբերական նամակի պահանջները:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում ստուգման ակտով ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, այսինքն՝ գործ ունենք անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքի հետ: Հետևապես, ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց:

Բողոքի քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրված տվյալների և ստուգման ընթացքում դուրս բերված կտրոնում և <Z> հաշվետվությունում արտացոլված տվյալների միջև առկա են տարբերություններ: Մասնավորապես, ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրվել է, որ կատարվել է հսկիչ գնում 900 դրամի չափով, <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման

արժեքը՝ 900 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն, որից հետո նորից դուրս է բերվել <Z> հաշվետվություն՝ 900 դրամ ընդհանուր գումարով: Սակայն, համաձայն հսկիչ գնումը կատարելուց հետո դուրս բերված կտրոնի, ինչպես նաև դրանից հետո դուրս բերված <Z> հաշվետվության տվյալների, ստացվում է, որ ստուգման ընթացքում գնված ապրանքը արժեցել է ոչ թե 900 դրամ (ինչպես որ նշված է ստուգման ակտում), այլ՝ 950 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ նման պայմաններում չի կարող հիմնավորված համարվել ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրված խախտումը: Այսինքն, քննարկվող դեպքում խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի պահանջները:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 02.05.2013թ-ի թիվ 2120326 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

